

ՀԱՅԿԱԿԱՆ Խ Ս Հ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ,  
ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ  
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ՈՐԵՆՍԳԻՐՔ

ԱՌ 1-Ն ՀՈՒՆԻՍԻ 1938 Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.

347  
—  
Հ-25

ՅԵՐԵՎԱՆ—1939

C 9PM-7  
3040

1 MAR 2010

347  
Z-25

ՀԱՅԿԱԿԱՆ Խ Ս Հ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ,  
ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ  
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ՈՐԵՆՍԳԻՐՔ

ԱՌ 1-Ն ՀՈՒՆԻՍԻ 1938 Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ.



ՅԵՐԵՎԱՆ—1939



09 SEP 2013

37.302



56741-66

## ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅԵՎ ԽՆԱՄԱ- ԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍՊԻՐԲԸ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Հայկական ԽՍՀ Կենտրոնական Դործադիր Կոմիտեի 5-րդ գումարման 2-րդ նստաքառնի վարժումը՝ բն-դունված 1927 թ. սեպտեմբերի 18-ին—Որ. և Կարգ. Ժող. 1927 թ. № 9 Հոդ. 70).

Ամուսնությունից, ընտանիքից և խնամակալու-թյունից նոր հեղափոխական կենցաղի պայմաններում ծագող իրավական հարաբերությունները կարգավորե-լու, մոր և մանավանդ զավակների շահերն ապահո-վելու, նաև ամուսինների իրավունքները գույքի և զավակների զատարակության վերաբերմամբ հավա-սարեցնելու նպատակով Կենտրոնական Դործադիր Կոմիտեի 2-րդ նստաքառնը վորոշում է.—

1. Հաստատել ամուսնության, ընտանիքի և խնա-մակալության Որենսդիրքը և կիրառման մեջ դնել 1927 թ. նոյեմբերի 1-ից:

2. Ամուսնության, ընտանիքի և խնամակալու-թյան Որենսդիրքը հաստատելու հետևանքով վերաց-նել, «Քաղաքացիական կացության ակտերի, ամուս-ն և թյան, ընտանիական և խնամակալության իրա-



վունքի վերաբերյալ ՌԽՍՖՆ 1918 թ. Որենսդրքի ներգործությունը ՀԽՍՀ սահմաններում (ՀԽՍՀ հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետը—Դեկրետ. և Հրաման. Ժող. 1920-21 թիվ պր. 1, հոդ 39):

3. Ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենսդրքը հաստատելու հետեվանքով իրենց ուժը կորցրած համարել հետեվյալ որենսդրական ակտերը.

1. Ժողկոմխորհի 1924 թ. դեկտեմբերի 8-ի՝ Ամուսնացողների ցուցակագրության մասին վորոշումը (Որ. Ժող. 1925 թ. № 2, հոդ. 14).

2. «Ամուսնացողների ցուցակագրության» վերաբերյալ Ժողկոմխորհի 1924 թ. դեկտեմբերի 8-ի վորոշման փոփոխության մասին (Որ. Ժող. 1926 թ. № 2, հոդ. 16).

3. Կենտգործկոմի 1926 թ. սեպտեմբերի 15-ի՝ «Քաղաքացիական կացության ակտերի, ամուսնության, ընտանիքի և խնամակալության իրավունքի վերաբերյալ Որենսդրքի 3-րդ բաժնի 5-րդ գլուխը—վորդեգրության վերաբերյալ փոփոխելու մասին» —վորոշումը (Որ. Ժող. 1926 թ. № 10 հոդ. 88):

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ, ԸՆՏԱՆԻՔԻ ՅՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՍՊԻՐՔ

Բ Ա Ժ Ի Ն 1.

### ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ Մ Ա Ս Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ 1.

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Ամուսնության գրանցումը սահմանվում է ինչպես պետական և հասարակական շահերի տեսակետից, այնպես ել ամուսինների և զավակների անձնական ու գույքային իրավունքների պաշտպանությունը հեշտացնելու համար: Ամուսնությունը ձևավորվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցելու միջոցով՝ այս Որենսդրքի 4-րդ բաժնում սահմանված կարգով:

2. Ամուսնության գրանցումը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում ամուսնության փաստի անվիճելի ապացույց է հանդիսանում: Կրոնական ծիսակատարություններով տեղի ունեցած ամուսնության փաստը հաստատող փաստաթղթերն իրավական վորեն նշանակություն չունեն:



Մանրութիւն.— Մինչև 1920 թ. գեկտեմբերի 21-ը կրօնական ծիսակատարութիւններով կատարված ամուսնութիւնները հավասարեցվում են զբանցված ամուսնութիւններին:

3. Փաստորեն ամուսնական հարաբերութիւններէ մեջ գտնվող և սահմանված կարգով չզբանցված անձինք իրավունք ունեն ամեն ժամանակ ձևակերպելու իրենց հարաբերութիւնները զբանցման միջոցով, ցույց տալով, թե փաստորեն վորքան ժամանակ են միասին ապրում:

Գ Լ Ո Ի Խ 2.

#### ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Ամուսնութիւնը զբանցելու համար անհրաժեշտ է.—

ա) ամուսնութիւնը զբանցելու փոխադարձ համաձայնութիւն, բ) ամուսնական հասակ ունենալը և գ) այս Որենսգրքի 135-րդ հոդ. հիշատակված փաստութիւններ ներկայացնելը:

5. Ամուսնական հասակը սահմանվում է կանանց համար 16 տարի, տղամարդկանց համար 18 տարի:

6. Ամուսնութիւնները զբանցվել չեն կաթող՝ ա) յեթե ամուսնացողներից թեկուզ մեկ կողմն արդեն իսկ զբանցված կամ չզբանցված ամուսնական հարաբերութիւնների մեջ է մեկ ուրիշի հետ, բ) այն անձներէ միջև, վորոնցից թեկուզ մեկը սահմանված կարգով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ է ճանաչված, գ) ուղիղ վերընթաց կամ վայրընթաց գծով ազգակցութեան մեջ գտնվող անձների միջև (որինակ՝ հայրը և աղջիկը, մայրը և վորդին, պապը և թոռը,) այլև հա-

րազատ և խորթ քույրերը և յեղբայրները, այսինքն՝ նրանք, ովքեր ծագում են ընդհանուր հորից և մորից, ինչպես և նրանք, ովքեր կամ ընդհանուր հայր ունեն, բայց տարբեր մայրեր կամ ընդհանուր մայր, բայց տարբեր հայրեր):

Գ Լ Ո Ի Խ 3.

#### ԱՄՈՒՍՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Ամուսինները կարող են զրկել մեկ ընդհանուր, մարդու կամ կնոջ, ազգանունով կամ ամուսինների միացյալ ազգանունով կամ պահպանել իրենց մինչ ամուսնական ազգանունները: Այդ մասին նրանք պետք է հայտնեն ամուսնութիւնը զբանցելու ժամանակ:

8. Հիմնական քաղաքացիութեան և ոտարերկրյա քաղաքացիութեան մեջ գտնվող անձների ամուսնութիւնը զբանցելիս, նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր քաղաքացիութիւնը: Այդ անձանց քաղաքացիութիւնը կարող է փոփոխութեան յենթարկվել Միութեան ուրեքով սահմանված դուրացված կարգով (տես Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան քաղաքացիութեան մասին Որենքը—«Հիմնական Գերագույն Խորհրդի տեղեկագիր», 1938 թ. սեպտեմբերի 5-ին № 11,

9. Յերկու ամուսիններն ել կատարելապես ազատ են իրենց համար զբաղմունք և արհեստ ընտրելու: Ընդհանուր անտեսութիւն վարելու կարգը սահմանվում է ամուսինների փոխադարձ համաձայնութեամբ: Ամուսիններից մեկի բնակավայրի փոփոխութիւնը



մյուս ամուսնու համար նրան հետևելու պարտականութիւն չի ստեղծում:

10. Մինչ ամուսնութիւնն ամուսիններին պատկանող գույքը նրանց բաժան գույքն է համարվում: Ամուսնութեան ընթացքում վատարկած գույքը համարվում է ամուսինների ընդհանուր գույք: Ամուսիններից յուրաքանչյուրին պատկանող գույքի չափը, վեճ ծագելու դեպքում, վորոշում է գատարանը:

Ծանոթութիւն.— Ամուսինների իրավունքները հողի, այլև գյուղացիական ծխի ընդհանուր ոգտագործութեան գույքի վերաբերմամբ սահմանվում են Հողային Որենսգրքի 64 և 65 հոդվածներով և սրանց պարզաբան ու լրացման նպատակով հրատարակված որենքներով:

11. Այս Որենսգրքի 10-րդ հոդվածի ներգործութիւնը տարածվում է նաև այն անձանց գույքի վրա, վորոնք թեկուզ և գրանցված չեն, բայց փաստորեն ամուսնական հարաբերութիւնների մեջ են գտնվում, յեթի նրանք փոխադարձաբար իրար ամուսիններ են համարում կամ յեթի ամուսնական հարաբերութիւնները նրանց միջև հաստատված են գատարանի կողմից՝ նկատի առնելով նրանց կյանքի փաստական նշաններն ու հանգամանքները:

12. Այն դեպքում, յերբ ամուսնութիւնը գրանցված չէ, ամուսնական կենակցութեան ապացույց են հանդիսանում գատարանի համար՝ միատեղ կենակցելու փաստը, յերբ կենակցութեան պահին գոյութիւն ունի ընդհանուր տնտեսութիւն, ամուսնական հարաբերութիւնների արտահայտութիւնը 3-րդ անձանց առջև անձնական գրագրութիւն մեջ և այլ փաստա-

թղթերով կամ նայած հանգամանքներին՝ փոխադարձ նյութական ոժանդակութիւնը, զավակների միատեղ գատարակումը և այլն:

13. Ամուսինները կարող են ունենալ իրար հետ որենքով թույլատրված ամեն տեսակի գույքային և պայմանագրից բխող փոխհարաբերութիւններ: Ամուսինների միջև կայացած այն համաձայնութիւնները, վորոնք սահմանափակում են կնոջ կամ մարդու գույքային իրավունքները, անվավեր են և պարտադիր չեն ինչպես յերրորդ անձանց, այնպես ել ամուսինների համար, վորոնց իրավունք է վերապահվում այդ համաձայնութիւնները կատարելուց ամեն ժամանակ հրաժարել:

14. Կարիքավոր անաշխատունակ ամուսին իրավունք ունի ապրուստի միջոց ստանալու մյուս ամուսնուց, յեթի վերջինը գատարանի վորոշմամբ ոժանդակութիւն ցույց տալու ընդունակ է ձանաչվում: Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունի նաև կարիքավոր աշխատունակ ամուսինը գործազրկութեան ժամանակ:\*

15. Կարիքավոր անաշխատունակ ամուսնու՝ մյուս ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքը պահպանվում է նաև ամուսնութիւնը լուծելուց հետո մինչև այն պայմանները փոխվելը, վորոնք այս Որենսգրքի 14-րդ հոդ. համաձայն ապրուստի միջոց ստանալու հիմք են ծառայում, սակայն, վոչ անվերի, քան ամուսնութիւնը լուծելուց հետո մեկ տարվա ընթաց-

\*ԽՍՀՄ-ում գործազրկութիւնը լիկվիդացիայի յենթարկելու հետեւանքով այս պարբերութիւնը կորցրել է իր ուժը:



քում: Կարիքավոր գործադուրկ ամուսնուն հասանելիք ոժտաբուժության չափն ամուսնությունը լուծելու դեպքում սահմանվում է դատարանի կողմից միջ ափս- լի, քան 6 ամիս ժամանակով և չի կարող ավելի լինել, քան սոցիալական ապահովության համապատաս- խան նպաստի գումարի չափը:

16. Ապրուստի միջոց ստանալու իրավունք ունեն ինչպես ամուսնության ժամանակ, այնպես եւ ամուս- նությունը լուծելուց հետո նաեւ այն անձինք, վորոնք փաստորեն ամուսնական հարաբերությունների մեջ են, թեկուզ և այդ հարաբերությունները զբանցված չեն, յեթե նրանք համապատասխանում են այս Որենս- գրքի 11 և 12-րդ հոդվածներով նախատեսված հատ- կան իշխերին:

Գ Լ Ո Ի Խ 4.

#### ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

17. Ամուսնությունը դադարում է ամուսիններից վորեւէ մեկի մահվան դեպքում, այլև յեթե դատարանը նրան մահացած է ճանաչում:

18. Ամուսինների կենդանության ժամանակ ամուս- նությունը կարող է լուծվել ինչպես ամուսինների փոխադարձ համաձայնությամբ, այնպես եւ նրանցից վորեւէ մեկի միակողմ ցանկությամբ:

19. Ինչպես գրանցված, այնպես եւ չգրանցված, սակայն դատարանի կողմից այս Որենսգրքի 12-րդ հոդ. համաձայն հաստատված ամուսնության լուծումը ամուսինների կենդանության ժամանակ կարող է զբանցվել քաղաքացիական կացության ակտերի զբանց- ման մարմիններում (ապահարպան):

20. Ամուսնալուծության փաստն ամուսնության զբանցման քաղաքացիական դեպքում, կարող է հաս- տատվել նաեւ դատարանով, յեթե ամուսնալուծության փաստը տեղի յե ունեցել մինչեւ 1936 թ. հոկտեմբերի 22-ը (1936 թ. հոկտեմբերի 22-ին — Որենքների և Կարգ. Ժող. № 10 հոդ. 78):

21. Ամուսնությունը զբանցելիս ամուսինները հայտնում են, թե ինչ ազգանունով եւ կամենում զբվել նրանցից յուրաքանչյուրը: Ամուսինների միջև այդ հարցում համաձայնություն չլինելու դեպքում, նրան- ցից յուրաքանչյուրին վերապահվում է նրա մինչ ամուսնությունն ունեցած ազգանունը:

22. Քաղաքացիական կացության ակտերի զբանց- ման մարմինների կողմից ամուսնությունը զբանցելիս, անպայման հարց է տրվում այն մասին, թե ամուսին- ներից վորի մոտ և զավակներից վորն է մնում դաս- տիարակվելու, և թե նրանցից վորը և ինչ չափով պետք է հոգա զավակների ապրուստի ծախսերը, այլև անաչ- խատունակ ամուսնուն հասանելիք ապրուստի միջոցի չափի հարցը: Յեթե ամուսինների միջև այդ հարցերի վերաբերմամբ համաձայնություն կայացել է, այդպի- սին մտցվում է ամուսնալուծության զբանցման մատ- յանի մեջ, վորի քաղվածքը տրվում է ամուսիններից յուրաքանչյուրին: Այդ համաձայնությունը նախկին ամուսիններին և զավակներին չի զրկում հետագայում ընդհանուր հայցային կարգով համաձայնությամբ նա- խատեսնվածից ավելի կամ պակաս չափով ապրուստի միջոց պահանջելու իրավունքից:

23. Համաձայնության մեջ հիշատակված պար- տավորությունները չկատարելու դեպքում, շահագրգո-



ված անձերը նարոյ են գիմել ժողովրդական դատա-  
րանին՝ Քաղաքացիական Դատավորության Որենսգրքի  
210-րդ հոդ. «գ» կետի համաձայն դատական հրաման  
ստանալու համար:

24. Համաձայնությունն չլինելու դեպքում, զա-  
վակներին, այլև կարիքավոր ու անաշխատունակ  
ամուսնու ապրուստի միջոցի չափի հարցը տնօրինվում  
է ընդհանուր հայցալին կարգով, ըստ վորում, դատա-  
րանը հայցալիններն ընդունելու հետ միաժամանակ,  
նայած գործի հանգամանքներին և յեղևելով զավակնե-  
րի շահերի պաշտպանության տեսակետից, վորողում և  
կայացնում այն մասին, թե ժամանակավորապես ում  
մոտ պիտի դաստիարակվեն զավակները, թե ծնող-  
ներից վորը և ինչ չափով և պարտավոր ժամանակա-  
վորապես, մինչև վեճի վերջնական լուծումը, հոգալ  
զավակներին, այլև կարիքավոր ու անաշխատունակ  
ամուսնու մասին: Կարիքավոր և անաշխատունակ  
ամուսնուն հասանելիք ապրուստի միջոցի չափը ևս,  
համաձայնությունն չլինելու դեպքում, վորողվում է  
դատարանի կողմից ընդհանուր հայցալին կարգով:

Բ Ա Ժ Ի Ն 2.

ԶԱՎԱԿՆԵՐԻ ՈՒ ԾՆՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ս Կ Զ Բ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր

25. Զավակներին և ծնողներին փոխադարձ իրա-  
վունքները հիմնվում են արենակցության վրա: Այն

զավակները, վորոնց ծնողներն ամուսնացած չեն, վա-  
յելում են այնպիսի իրավունքներ, ինչպես և ամուս-  
նացած ծնողների զավակները:

26. Զավակի հայրն ու մայրը գրանցվում են  
ծննդամատյանի մեջ:

27. Ծնողների մասին գրանցում չլինելու կամ  
գրանցումն անկանոն ու թերի լինելու դեպքում, շա-  
հագրգույն անձաձ իրավունք է վերապահվում դատա-  
կան կարգով ապացուցելու կամ ժխտելու հայրու-  
թյունն ու մայրությունը:

28. Զավակի շահերի պաշտպանության նպատա-  
կով, մորն իրավունք է վերապահվում հղիության  
շրջանում կամ զավակ ծնելուց հետո գիմում տալ  
զավակի հոր մասին՝ քաղաքացիական կացության  
ակտերի գրանցման տեղական մարմինն ըստ իր՝ բնա-  
կավայրի, ցույց տալով զավակի հոր անունը, հայրա-  
նունը, ազգանունը և բնակության վայրը:

29. Դիմում ստանալու մասին քաղաքացիական  
կացության ակտերի գրանցման մարմինը տեղեկաց-  
նում է այն անձին, վորը, գիմումի մեջ նշված է վոր-  
պես հայր: Յեթե վերջինը ծանուցում ստանալու որից  
մեկ ամսվա ընթացքում առարկությունն չենրկայացնի,  
ապա նա արձանագրվում է վորպես զավակի հայր:  
Դիմումի մեջ վորպես հայր հիշատակված անձը  
քաղաքացիական կացության ակտերի գրանցման  
մարմնից ծանուցումն ստանալու որից մեկ տարվա ըն-  
թացքում կարող է հայց հարուցել զավակի մոր դեմ՝  
նրա հայտարարության անճշտության առթիվ:

30. Զավակը ծնվելուց հետո հայրությունը հաա-



տատելու գերմոմով զավակի մայրն իրավունք ունի  
դիմելու նաև դատարանին:

31. Յեթե դատարանն ընդունի, վոր զավակի հայրը գերմոմի մեջ հիշատակված անձն է (այս Որենսդրքի 28 և 30 հոդվածները), ապա այդ մասին նա վորոշում է կայացնում և պարտականություն է դնում հոր վրա մասնակցելու հղիության, ծննդաբերության, զավակի ծննդյան ու ապրուստի միջոցներ հայթհայթելու հետ կապված ծախսերին, այլև օժանդակելու զավակի մորը՝ նրա հղիության ժամանակ և ծննդաբերությունից հետո 6 ամսվա ընթացքում:

32. Յեթե դատարանը հայրության հարցը քննելիս հաստատի, վոր զավակի մայրը սաղմնավորման շրջանում, բացի այս Որենսդրքի 28-րդ հոդ. հիշատակված անձից՝ սեռական հարաբերության մեջ է յեղել նաև այլ անձանց հետ, ապա դատարանը, յեկնելով բացառապես զավակի շահերից, վորոշում է կայացնում, այդ անձերից վորեւ մեկին զավակի հայր ճանաչելու մասին և դնում ենք վրա այս Որենսդրքի 31-րդ հոդվածով նախատեսված պարտականությունները:

#### Գ Լ Ո Ւ Խ 2.

### ԱԶԳԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆԻՔ-ՆԵՐԸ ՅԵՎ ՊՍՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Ծնողական իրավունքները կիրառվում են բացառապես նկատի առնելով զավակների շահերը և այդ իրավունքներն անկանոն կերպով կիրառելու դեպքում, դատարանին իրավունք է վերապահվում զրկելու ծնողներին իրենց իրավունքներից:

34. Յեթե ծնողները մեկ ընդհանուր ազգանուն են կրում, ապա այդ ազգանունն է սահմանվում նաև զավակների համար: Յեթե ծնողներն ընդհանուր ազգանուն չեն կրում, ապա զավակների ազգանունը սահմանվում է ծնողների համաձայնությամբ: Յեթե ծնողների միջև ազգանվան մասին համաձայնություն չըլի, ապա զավակների ազգանունը վորոշվում է խնամակալության և հոգաբարձության մարմին կողմից:

Հոր անհայտ լինելու դեպքում, զավակը կրում է մոր ազգանունը: Ամուսնալուծության դեպքում զավակները պահպանում են այն ազգանունը, վորն ստացել են ծնվելու ժամանակ:

35. Ծնողների տարբեր քաղաքացիության դեպքում, յեթե նրանցից թեկուզ միայն մեկը զավակը ծնվելու պահին ՀԽՍՀ քաղաքացի չէ յեղել և յեթե զավակը ծնվելու ժամանակ ծնողներից թեկուզ միայն մեկը բնակվել է ԽՍՀ Միության տերիտորիայում, զավակը համարվում է ՀԽՍՀ քաղաքացի: Այն դեպքում սակայն, յեթե զավակի ծնվելու պահին ծնողներից մեկը յեղել է ՀԽՍՀ քաղաքացի, բայց այդ պահին յերկու ծնողն էլ ԽՍՀ Միության տերիտորիայից դուրս են բնակվել, զավակի քաղաքացիությունը վորոշվում է ծնողների համաձայնությամբ:

36. ՀԽՍՀ քաղաքացի հանդիսացող և ԽՍՀ Միության տերիտորիայում բնակվող ծնողներից մեկի քաղաքացիության փոփոխությունը վոչ մի կերպ չի անդադարեցնում զավակների քաղաքացիության վրա: Զավակների քաղաքացիությունն այն դեպքում, յերբ ՀԽՍՀ քաղաքացի հանդիսացող, սակայն ԽՍՀ Միության տերիտորիայից դուրս ապրող ծնողներից վորեւ



մեկը դուրս գա ՀԽՍՀ քաղաքացիությունից, վորոշ-  
վում ե ծնողների համաձայնությամբ:

Ծանոթություն.— Ծնողների քաղաքացիու-  
թյան այնպիսի փոփոխության դեպքում, վորի  
հետեւանքով յերկու ծնողներն ել դառնում են  
ՀԽՍՀ քաղաքացի կամ՝ ընդհակառակը, յերկուսն  
ել դադարում են ՀԽՍՀ քաղաքացի լինելուց, հա-  
մապատասխան կերպով փոխվում ե նաև այն  
զավակների քաղաքացիությունը, վորոնց 14  
տարին դեռ չի լրացել: 14 տարին լրացրած զա-  
վակների քաղաքացիությունը չի փոխվում ծնող-  
ների քաղաքացիությունը փոխվելիս:

37. Ծնողների համաձայնությունը՝ զավակների  
այս կամ այն կրոնին պատկանելու մասին իրավական  
վոչ մի նշանակություն չունի:

38. Զավակների վերաբերյալ բոլոր միջոցները  
ձեռնարկում են յերկու ծնողները միասեղ:

39. Ծնողների մեջ տարաձայնություն լինելու  
դեպքում, վիճելի հարցը լուծվում ե խնամակալու-  
թյան ե հոգաբարձության մարմինների կողմից՝  
ծնողների մասնակցությամբ:

40. Յեթե ծնողները միասին չեն ապրում, ապա  
նրանց համաձայնությունից ե կախված, թե նրանցից  
վորի մոտ պետք ե մնան անչափահաս զավակները:  
Ծնողների միջև համաձայնություն չլինելու դեպքում  
այդ հարցն ընդհանուր հայցային կարգով լուծում ե  
ժողովրդական դատարանը: Զավակի 10 տարին լրացը-  
նելուց հետո դատարանը պետք ե հարցում անի նրան,  
թե ծնողներից վորի մոտ ե կամենում մնալ, զավակի  
հայտարարությունն այդ մասին դատարանի համար

պարտադիր չե, յեթե դառնում ե, վոր զավակին տվյալ  
ծնողի մոտ թողնելը չի համապատասխանում նրա շա-  
հերին:

41. Ծնողները պարտավոր են հոգալ անչափահաս  
զավակների ե մասնավորապես՝ նրանց դաստիարակելու  
ե հանրոգուտ գործունեյության համար պատրաստելու  
մասին:

42. Ծնողները պարտավոր են ապրուստի միջոց-  
ներ հայթհայթել ինչպես անչափահաս, այնպես ե կա-  
րիքավոր անաշխատունակ զավակներին:

43. Անչափահաս զավակների թե անձնական ե  
թե գույքային շահերի պաշտպանությունն ընկնում ե  
ծնողների վրա, վորոնք զավակների ներկայացուցիչ-  
ներն են հանդիսանում դատարանում ե այլ հիմարկ-  
ներում:

44. Ծնողներն իրավունք ունեն հայցային կար-  
գով պահանջելու, վոր զավակներին իրենց վերադարձ-  
նեն այն բոլոր անձինք, վորոնք նրանց իրենց մոտ  
են պահում վոչ որևէ կամ դատարանի վորոշման  
հիման վրա: Դատարանը ձեռնադրոհ կաշկանդված  
չե ծնողների իրավունքով ե յուրաքանչյուր անգամ  
գործը պիտի լուծի բացառապես նկատի ունենալով  
զավակների շահերը:

45. Ծնողներն իրավունք ունեն, դաստիարակու-  
թյուն ե ուսում տալու նպատակով, զավակներին հանձ-  
նել ուրիշներին: Նրանց իրավունք ե վերապահվում  
նաև զավակների համաձայնությամբ, նրանց աշակեր-  
տության ե վարձու աշխատանքի տալու մասին պայ-  
մանագրեր կնքել այն դեպքում ե այն կարգով, վո-

Սժուսն., ըստ.





րոնք նախատեսնված են աշխատանքի գործող որեւնսդրութեամբ:

46. Այն դեպքում, յերբ ծնողները չեն կատարում կամ անկանոն և անորինաչափ կերպով են կատարում իրենց պարտականութիւնները զավակների նկատմամբ, այլև այն դեպքում, յեթե դաժան վերաբերմունք են ցույց տալիս դեպի զավակները, — դատարանի վորոշմամբ այդ ծնողները կարող են զրկվել իրենց ծնողական իրավունքներից:

Ծանոթութիւն. — 1. Ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ գործերը յենթակա յեն ժողովրդական դատարանին և կարող են հարուցվել համապատասխան պետական մարմինների, ինչպես նաև հասարակական կազմակերպութիւնների կողմից, այլև առանձին քաղաքացիների դիմումների հիման վրա:

Ծանոթութիւն. — 2. Խնամակալութեան մարմիններին իրավունք է վերապահվում մինչև դատարանի վճիռը՝ վորոշում կայացնել զավակներին առնելու ծնողներից կամ այլ անձերից, վերոնց խնամքի տակ են նրանք գտնվում, յեթե զավակներին առանց մոր թողնելը վտանգավոր է զավակների համար:

47. Ծնողական իրավունքներից դատարանի վորոշմամբ զրկված ծնողները չեն զրկվում խնամակալութեան և հոգաբարձութեան մարմին խնամքին հանձնված զավակների հետ տեսակցելու իրավունքից: Սակայն, խնամակալութեան և հոգաբարձութեան մարմինը մինչև դատարանի հատուկ վորոշումը կարող է ծնողներին թույլ չտալ տեսակցելու զավակների հետ,

յեթե գտնի, վոր այդ կարող է ֆիասակար ազդեցութիւն ունենալ զավակների վրա:

48. Զավակների ապրուստը հոգալու պարտականութիւնն ընկնում է յերկու ծնողների վրա: Արիմենտ վորոշելիս, մեկ յերեխա պահելու համար պատասխանողից գանձվում է նրա ստացած աշխատավարձի մեկ չորրորդ մասը, յերկու յերեխա պահելու համար՝ մեկ յերրորդ մասը, 3 և ավելի յերեխա պահելու համար՝ պատասխանողի աշխատավարձի 50<sup>0</sup>/<sub>0</sub>-ը: (1936 թ. հոկտեմբերի 22-ին — Որ. և Կարգ. Ժող. №—10 հոդ. 78):

48-ա. Կուտնտեսականների համար հաշվարկվում է կատարվում է աշխորերով, նախորդ հոդ. նախատեսված նորմաներով: Յեթե արիմենտ ստացող կուտնտեսուհի մայրն աշխատում է պատասխանողի հետ մեկ կուտնտեսութեան մեջ, կուտնտեսութեան վարչութիւնը պարտավոր է անմիջապէս, աշխորեր հաշվելիս, հոր ստացած աշխորերի համապատասխան մասը գրանցել մոր հաշվին (նայած յերեխաների թվին): Յեթե մայրն աշխատում է այլ կուտնտեսութեան մեջ, հոր ստացած աշխորերի համապատասխան մասը, աշխորերը վերջնականապէս հաշվարկելիս, մոր անվան է գրանցվում այն կուտնտեսութեան վարչութիւնը, վորտեղ աշխատում է պատասխանողը (1936 թ. դեկտեմբերի 22-ին — Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 78):

49. Զավակները պարտավոր են ապրուստի միջոցներ հայթհայթել իրենց կարեքավոր անաշխատունակ ծնողներին:

50. Յեթե ծնողները չկամենան ապրուստի միջոցներ հայթհայթել զավակներին, այլև յեթե զավակները չկամենան հոգալ ծնողների ապրուստն այս Որենսդրքի



42 և 49 հոգւածներով նախատեսնված դեպքերում, ապա ապրուստի միջոցներ ստանալու իրավունք ունեցող անձինք կարող են դատական կարգով պահանջել իրենց ապրուստը:

Ծանոթութիւն.— Ծնողները կամ զավակները նյութական դրութիւնը փոխվելու դեպքում, դատարանի վճիռը կարող է փոխվել դատարանի կողմից՝ ընդհանուր հայցային կարգով:

51. Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում զավակներին ապրուստի միջոցներ հայթհայթելու պարտականութիւնից:

52. Միատեղ ապրուստի միջոցներ հայթհայթելու պարտավորված անձինք պատասխանատու չեն հավասար չափով՝ բացառութեամբ այն դեպքերի, յերբ դատարանը, նկատի առնելով պարտավորված անձանց նյութական տարբեր վիճակը կամ նրանցից վորեւ մեկի բացակայութիւնը կամ այլ հարգելի պատճառներով անհրաժեշտ կհամարի այդ պարտականութեան կատարմանը մասնակցելու այլ չափեր սահմանել:

53. Ծնողների և զավակների իրավունքները դուրս դացիական ծխի գույքի վերաբերմամբ սահմանվում են Հողային Որենսգրքի համապատասխան հոգւածներով:

54. Կարիքավոր անչափահաս յեղբայրներն ու քույրերն իրավունք ունեն ապրուստի միջոցներ ստանալ իրենց բավականաչափ միջոցներ ունեցող յեղբայրներից և քույրերից այն դեպքերում, յերբ հիշյալ կարիքավոր յեղբայրներն ու քույրերը չեն կարող ապրուստի միջոցներ ստանալ իրենց ծնողներից՝ վեր-

ջինների բացակայութեան կամ միջոցներ չունենալու պատճառով:

55. Անշխատունակ կարիքավոր պապն ու տատն իրավունք ունեն ապրուստի միջոցներ ստանալ իրենց բավականաչափ միջոցներ ունեցող թոռներից, յեթե միայն անկարող են այդ միջոցներն ստանալ իրենց ամուսիններից կամ զավակներից: Նմանապես ապրուստի միջոցներ ստանալու իրավունք ունեն իրենց բավականաչափ միջոցներ ունեցող պապից և տատից նաև թոռները, յեթե այդ միջոցները չեն կարող ստանալ իրենց ծնողներից:

56. Աշխատավորական հողագործական տնտեսութեան (ծխի) անդամից զավակի համար ապրուստի միջոցներ բռնագանձելիս, յերբ նրա անձնական միջոցները բավական չեն զավակին ապահովելու համար, վերջինս իրավունք ունի ապրուստի միջոցներ ստանալ ծխի ընդհանուր գույքի այն մասից, վորը հասնում է ծխի հիշյալ անդամին: Այս դեպքում բռնագանձումը՝

1) թույլատրվում է միմիայն ծխի այնպիսի անդամների նկատմամբ, վորոնք ընդհանուր տնտեսութիւն են վարում և

2) կարող է դարձվել միմիայն դրամական գումարների և տնտեսութեան արդիւնքների վրա, սակայն՝ չի կարող տեղի ունենալ հողից, անասուններից, ինվենտարից և ծխի ընդհանուր տնտեսութեան սարք ու կարգից հարկադիր կերպով բաժին հանելու միջոցով, յեթե այդ չի կատարվում այն կարգով և պայցով, յեթե այդ չի կատարվում այն կարգով և պայմաններում, վորոնք նախատեսնված են Հող. Որենս-



գրքով՝ աշխատավորական հողագործական տնտեսութ-  
յունների (ծխերի) բաժանության համար:

Գուլքային բաժին հանելու դեպքում անջատվո-  
ղին ծխի ընդհանուր գուլքից պիտի բաժին հանվի այն  
աշխատանքի և միջոցների քանակությանը համեմատ,  
վորը նա ներդրել է ծխի տնտեսության մեջ

### Գ Լ Ո Ւ Խ 3

#### Վ Ո Ր Դ Ե Գ Ր Ո Ւ Մ

57. Վորդեգրումը թույլ տրվում է միմիայն փոք-  
րահասակների և անչափահասների նկատմամբ ու բացա-  
ռապես յերեխաների շահերը նկատի ունենալով:

ԽՍՀՄ տեղիտորիայում բնակվող ոտարերկրյա  
քաղաքացիները կարող են վորդեգրել խորհրդային  
քաղաքացիների զավակներին այս Որենսգրքով նա-  
խատեսված կանոնների համաձայն և բացի ղրանից,  
յուրաքանչյուր առանձին դեպքում անպայման թույլ-  
տվություն ստանալով ՀԽՍՀ Կենտրոնական Գործադիր  
Կոմիտեյի նախագահությունից: Յեթե վորդեգրողը  
պատկանում է բանձազրկության դատարանին կամ ուրիշի աշ-  
խատանքից չոգտվող գյուղացիությանը, վերոհիշյալ  
հատուկ թույլտվությունը տալիս է վորդեգրվողի բնա-  
կության վայրի քաղխորհուրդը կամ շրջանային Գոր-  
ծադիր Կոմիտեն:

59. Վորդեգրումը կատարվում է խնամակալու-  
թյան և հոգաբարձության մարմինների վորոշմամբ և  
յենթակա յե գրանցման ընդհանուր կարգով՝ քաղաքա-  
ցիական կացության ակտերի գրանցման մարմիններում:

60. Վորդեգրման ժամանակ վորդեգրվողը կարող է

ստանալ վորդեգրողի ազգանունը, այլև յեթե, վորդե-  
գրվողը համաձայնվի, նաև վորդեգրողի հայրանունը:

61. Յեթե վորդեգրվողը ծնողներ ունի կամ այն  
դեպքում, յերբ վորդեգրվողը գտնվում է խնամակա-  
լության կամ հոգաբարձության տակ, վորդեգրելու  
համար անհրաժեշտ է ծնողական իրավունքներից  
չզրկված ծնողների, խնամակալների կամ հոգաբար-  
ձուների համաձայնությունը:

62. Յեթե վորդեգրում է ամուսնացած վորեք մե-  
կը, անհրաժեշտ է նաև մյուս ամուսնու համաձայնու-  
թյունը:

63. 10 տարին լրացրած յերեխաների վորդեգրումն  
առանց նրանց համաձայնության՝ չի թույլատրվում:

64. Վորդեգրվածներն ու նրանց սերունդը վոր-  
դեգրողների նկատմամբ և վորդեգրողները՝ վորդեգր-  
վածների և նրանց սերնդի նկատմամբ իրենց անձնա-  
կան, գուլքային իրավունքների ու պարտականու-  
թյունների ասպարիզում հավասարեցվում են ծագու-  
մով ազգականներին:

65. Վորդեգրումը, յերբ այդ կատարվել է վոր-  
դեգրողի ծնողների բացակայությամբ կամ առանց  
նրանց համաձայնությունն ստանալու, կարող է բե-  
կանվել ծնողների խնդրով խնամակալության և հոգա-  
բարձության մարմինների կողմից, յեթե զավակը նը-  
րանց վերադարձնելը համապատասխանում է վերջինի  
շահերին: 10 տարեկանից ավելի հասակ ունեցող ան-  
չափահաս վորդեգրումը բեկանելու համար, անհրա-  
ժեշտ է նրա համաձայնությունը:

66. Յուրաքանչյուր անձ կամ հիմնարկ կարող է  
դատական կարգով հարց հարուցել վորդեգրումը



քեկանելու մասին, յեթե այդ պահանջում են յերե-  
խայի շահերը:

67. Վորդեգրումը բեկանելու դեպքում դատաբա-  
նը վճիռ է կայացնում յերեխան վորդեգրողից վերց-  
նելու և խնամակալության ու հոգաբարձության մար-  
միններե խնամքին հանձնելու մասին: Դատարանը կա-  
րող է իր վճռում պարտավորեցնել վորդեգրողին ապ-  
րուստի միջոցներ հայթհայթել յերեխայի համար:

### Բ Ա Ժ Ի Ն 3.

## ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1-ԻՆ

### ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

68. Խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անգործունակ անձի, նրա որինական իրավունքների և շահերի պաշտպանության համար, այլև որենքով նախատեսնված դեպքերում՝ նրա գույ-  
քի պահպանության համար:

69. Խնամակալությունը նշանակվում է 14 տա-  
րին չլրացրած անչափահասների և սահմանված կար-  
գով տկարամիտ կամ հոգեկան հիվանդ ճանաչվածնե-  
րի, այլև շռայլողների նկատմամբ: Բացի դրանից, խնամակալությունը նշանակվում է անհայտ բացակա-  
յող կամ մահացած անձանց գույքի վրա՝ որենքով սահմանված դեպքում: Խնամակալներն իրենց խնա-  
մարկյալների անունից և նրանց շահերը նկատի ու-  
նենալով իրագործում են նրանց իրավունքներն ու կա-  
տարում նրանց պարտականությունները:

70. Հոգաբարձությունը նշանակվում է 14 տա-  
րեկանից մինչև 18 տարեկան անչափահասների, այլև  
չափահասների վերաբերմամբ, յեթե վերջինները ճոր-  
հիվ իրենց ֆիզիկական վիճակի անկարող են լինելու-  
րույն կերպով պաշտպանել իրենց իրավունքները: Հա-  
մապատասխան դեպքերում հոգաբարձուներն ոժտագա-  
կություն են ցույց տալիս այդ անձանց՝ իրենց  
իրավունքներն իրագործելիս և իրենց պարտականու-  
թյունները կատարելիս, ինչպես նաև պաշտպանում են  
նրանց Յ-րդ անձանց չարարկություններից:

71. Ծնողները և վորդեգրողները խնամակալ կամ  
հոգաբարձու յեն համարվում առանց հատուկ նշանակ-  
ման:

72. ԽՍՀՄ-ում ամեն տեսակի խնամակալության  
և հոգաբարձության մարմիններն են հանդիսանում—  
ա) գյուղական վայրերում—գյուղխորհուրդները, բ)  
քաղաքներում—քաղխորհուրդները:

Օտևերություն.— Այս հոգվածում հիշատակ-  
ված պարտականությունը քաղխորհուրդները դը-  
նում են գործադիր կոմիտեների համապատասխան  
բաժինների, մասնավորապես, անչափահասների  
նկատմամբ՝ լուսբաժինների վրա, տկարամիտնե-  
րի և հոգեկան հիվանդների նկատմամբ՝ առբա-  
րի և հոգեկան հիվանդների այլ կատեգորիաների  
ժինների, խնամարկյալների այլ կատեգորիաների  
նկատմամբ՝ սոցապ բաժինների և կամ նրանց  
փոխարինող համապատասխան այլ մարմինների  
վրա:

73. Խնամակալության և հոգաբարձության գոր-  
ծերի վերաբերմամբ գյուղխորհուրդների գործունեյու-



թյան ընդհանուր հսկողութիւնը տրվում է շրջանային գործկոմիտեների վրա:

74. Խնամակալութիւնն ու հոգաբարձութիւնն անմիջականորեն իրականացնելու նպատակով, խնամակալության և հոգաբարձության մարմինները խնամակալ կամ հոգաբարձու յեն նշանակում խնամարկյալի մոտիկ անձերից կամ հասարակական կազմակերպության, արհեստակցական միության, գյուղփոխովումի և այլ կազմակերպության կողմից այդ նպատակով ընտրված անձերից, իսկ այդպիսիները չլինելու դեպքում՝ նաև այլ անձերից:

75. Խնամակալութիւնն ու հոգաբարձութիւնը նշանակվում են ըստ խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձի բնակության վայրի, կամ այն վայրում, վորտեղ գտնվում է խնամակալությանը յենթակա գույքը:

76. Խնամակալ կամ հոգաբարձու ընտրելու ժամանակ ուշադրության պետք է առնվեն անձնական հատկութիւնները, համապատասխան պարտականութիւններ կատարելու ընդունակութիւնը, այն հարաբերութիւնները, վորոնք գոյութիւն ունեն ավյալ անձի և խնամակալությանը կամ հոգաբարձությանը յենթակա անձի միջև, այլև յերբ այդ հնարավոր է՝ նաև խնամարկյալի ցանկութիւնը:

77. Խնամակալ և հոգաբարձութիւն կարող է լինել—ա) ՀԽՍՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի «դ» «ե» «զ» և «ը» կետերում հիշված անձինք<sup>1</sup>, բ) դատական կարգով ծնողական իրավունքներից զրկվածները,

<sup>1</sup> Համաձայն Հայկական ԽՍՀ նոր Սահմանադրության 110 հոդ. յենթակա յեն փոփոխման:

գ) այն անձինք, վորոնց շահերը ներհակ են խնամակալությանն ու հոգաբարձությանը յենթակա անձանց շահերին, ինչպես նաև այն անձինք, վորոնց հետ թշնամական հարաբերության մեջ են և դ) անչափահասները:

Ծանոթություն.— Այս հոդվածի «ա» և «դ» կետերում հիշված սահմանափակումները ծնողների վրա չեն տարածվում, բացառութեամբ այն դեպքերի, յերբ նրանք հոգեկան հիվանդ են:

78. Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց հրաժարվելը չի թույլատրվում, բացառութեամբ այս հոդվածում հիշատակված դեպքերի: Խնամակալ կամ հոգաբարձու նշանակվելուց իրավունք ունեն հրաժարվելու՝ ա) նրանք, վորոնց 60 տարին լրացել է՝ բ) նրանք, ովքեր հիվանդության, ֆիզիկական պակասութեան, նյութական վիճակի կամ զբաղմունքի տեսակի և կամ վարած պաշտոնի պատճառով անկարող են կատարել այդ պարտականութիւնները, գ) այն անձինք, վորոնք իրենց ընտանիքում յերկու կամ ավելի զավակ են դաստիարակում, դ) ծնկեր կամ մինչև 8 տարեկան զավակ ունեցող մայրերը և ե) արդեն իսկ խնամակալ կամ հոգաբարձու նշանակված անձինք:

79. Անչափահասի խնամակալը պարտավոր է հոգալ նրա դաստիարակութեան, կրթութեան և նրան հանրագումար գործունեութեան համար պատրաստելու մասին: Հոգեկան հիվանդի կամ տկարամիտ անձի խնամակալը պարտավոր է միջոցներ ձեռք առնել նրան բժշկելու և խնամարկյալի առողջական վիճակին համապատասխան պայմաններում պահելու համար:

80. Այն դեպքերում, յերբ խնամակալը կամ հո-



զաբարձուն այս Որենսգրքի 74 հոդվածի հիման վրա խնամակալության և հոգաբարձության ե նշանակված հասարակական կազմակերպության կողմից, այդ կազմակերպությունն ոժանդակություն և ցույց տալիս նրան, հսկում են նրա գործունեությունն վրա և յեզրակացություններ և տալիս խնամակալության և հոգաբարձության մարմնի հանձնարարությունը:

81. Խնամակալական և հոգաբարձական պարտականությունները կատարվում են ձևերաբար: Յեթե խնամակալության և հոգաբարձության մարմինների տնօրինություն տակ յեկամտարեր գույքեր կան, ապա այդ մարմինը կարող է վորոշ վարձատրություն նշանակել խնամակալին՝ այդ գույքից ստացվող յեկամտի 10 տոկոսից վոշ ավելի չափով:

82. Խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից խնամակալի ապրուստը հոգալու համար անհրաժեշտ և ոգտակար համարված այդ ծախքերը կատարվում են նրա գույքի յեկամուտից, իսկ նրանց անբավարար լինելու կամ կատարելապես բացակայելու դեպքում՝ խնամարկյալի բուն գույքից, վորն ոտարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությունով:

Մանորութուն.— Խնամարկյալը վորեւ գույք չունենալու դեպքում, խնամակալության և հոգաբարձության մարմինը միջնորդություն է հարուցում սոցիալական ապահովության մարմնի առաջ՝ խնամակալին միջոցներ տրամադրելու մասին՝ խնամարկյալի ապրուստը հոգալու համար:

83. Խնամակալն իրավունք ունի իր խնամարկյալին հետ պահանջելու ամեն մի անձից, վորը պահում

և նրան իր մոտ առանց վորեւ որինական հիմքի:

84. Հոգեկան հիվանդի վրա խնամակալություն նշանակելու ամեն մի դեպքի մասին խնամակալության և հոգաբարձության մարմինները հայտնում են առողջապահության համապատասխան մարմիններին՝ խնամարկյալի վերաբերմամբ մշտական հսկումություն սահմանելու համար, վորպիսին իրագործվում է Առողջապահության Ժողովրդական կոմիտեի առի հրահանգի համաձայն:

85. ՀԽՍՀ այն քաղաքացիների նկատմամբ, վորոնք գտնվում են կամ գույքեր ունեն իր Միություն սահմաններից դուրս, խնամակալության և հոգաբարձության գործերը տնօրինում են իր Միության արձույթի հիման վրա (1930 թ. մայիսի 31-ին—Որենք և կարգ. Ժող. № 6, հոդ. 115):

## Գ Լ Ո Ւ Խ 2.

### ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

86. Խնամակալը կարող է կատարել այն բոլոր գործարքները, վոր կարող եր կատարել ինքը խնամարկյալը, յեթե նա գործունակ լիներ, այլև այն գործարքները, վոր կարող եր կատարել այն գույքի սեփականատերը, վորի վրա խնամակալություն է սահմանված բացի՝ ա) գույքը ոտարելուց, բ) գրավ դնելուց, գ) մուրհակներ և այլ պարտքի հանձնառությունների տալուց, դ) որենքով կամ կտակով ստացված ժառանգությունից հրաժարվելուց, ե) գույքը յերկար



ժամանակով վարձակալության տալուց, (մեկ տարուց ավելի), գ) խնամարկյալին պատկանող ձեռնարկության գործունեությունը դադարեցնելուց և ը) ընկերության պայմաններ կնքելուց: Այս գործողությունները կատարելու համար անհրաժեշտ է խնամակալության և հոգաբարձության մարմինների համաձայնությունը: Խնամարկյալին պատկանող գույքի նվիրատվություն, ինչպես նաև նրա անունից յերաշխավորության պայմանագիր կնքելը բնավ չի թույլատրվում:

Ծանոթություն.— Շուտ փչացող կամ իր բնույթով վաճառման յենթակա կամ գործածություն համար արդեն անպետք դարձած գույքը, յեթե միայն նրա արժեքը 50 ռուբլուց ավելի չի, կարող է վաճառվել առանց խնամակալության և հոգաբարձության մարմինների թույլտվության:

87. Թույլատրելով գույքի ոտարումը կամ գրավ դնելը խնամակալության և հոգաբարձության մարմինները կարող են ցուցումներ տալ խնամակալին՝ թե ստացած գումարներն ինչ կարիքների վրա պիտի ծախսեր:

88. Խնամակալը չի կարող վորեւ գործարք կատարել իր իսկ խնամարկյալի հետ, վոչ ել նրա ներկայացուցիչը հանդիսանալ խնամարկյալի և իր ամուսնու կամ մերձավոր ազգականների միջև գործարքներ կնքելիս կամ դատական և հերի քննություն ժամանակ և վոչ ել ձեռք բերել խնամարկյալի անունից պարտքի հանձնառություններ: Խնամարկյալ՝ իրեն խնամակալին կամ նրա ամուսնուն և կամ ազգականներին տալիք պարտքերը, յեթե այդպիսիներն արված են մինչև տվյալ անձի խնամակալ նշանակվելը, հատուցվում են

խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությամբ:

89. Անչափահաս խնամարկյալին դաստիարակություն և կրթության տալու կամ հոգեկան հիվանդին այլ անձանց խնամքին հանձնելու համար խնամակալը պետք է ստանա խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվությունը:

90. Այն անձինք, վորոնց վերաբերմամբ, համաձայն այս Որենսգրքի 70-րդ հոդվածի, հոգաբարձություն է նշանակվում, գործարքներ են կատարում անպայման հոգաբարձուների համաձայնությամբ: Այս Որենսգրքի 86-րդ հոդվածում հիշատակված սահմանափակումները տարածվում են նաև հոգաբարձուների վրա: Հոգաբարձության տակ գտնվող, անձնական աշխատանքով ձեռք բերված, առարկաների և գումարների վերաբերյալ գործարքներ կատարելու համար խնամակալության և հոգաբարձության մարմինները համաձայնությունը չի պահանջվում:

91. Խնամակալներն ու հոգաբարձուները հանդես են գալիս խնամարկյալների և հոգաբարձության տակ գտնվողների շահերը պաշտպանելու համար բոլոր հիմնարկներում, վորոնց թվում նաև դատական հաստատություններում, ինչպես նաև գույքային պայմանագրեր կնքելիս:

92. Յեթե խնամակալը կամ հոգաբարձուն անփութ գտնվեն ղեպի իրենց պարտականությունները կամ ի չարը գործ դնեն այդպիսիները, կարող են հեռացվել իրենց պարտականությունները կատարելուց խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի կամ պետական հիմնարկի, հասարակական



կազմակերպությունների կամ առանձին քաղաքացիների միջնորդությամբ, այլև խնամակալության և հոգաբարձության մարմնի նախաձեռնությամբ:

93. Խնամակալների և հոգաբարձուների գործողությունների դեմ կարելի չե գանգատ տալ խնամակալության և հոգաբարձության համապատասխան մարմիններին թե այն անձանց կողմից, վորոնք գտնվում են խնամակալության կամ հոգաբարձության տակ և թե պետական կամ հասարակական հիմնարկների և 3-րդ անձանց կողմից:

94. Խնամակալության և հոգաբարձության գործերի մասին գյուղխորհուրդների կայացրած վորոշումների և կարգադրությունների դեմ գանգատներ տրվում են համապատասխան շրջանային գործկոմի նախագահությանը, վորի վորոշումները վերջնական են: Քաղխորհուրդների վորոշումները համարվում են վերջնական և հետագա գանգատարկման յենթակա չեն:

### Գ Լ ՈՒ Խ 3.

#### ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՈԳԱԲԱՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

95. Խնամակալության և հոգաբարձության գործեր քննելիս խնամակալության և հոգաբարձության մարմինը հրավիրում է զիմում տվողներին, գանգատավորներին, խնամակալներին և հոգաբարձուներին, գործով շահագրգռված անձանց, վկաներին, փորձագետներին, այլև անհրաժեշտության դեպքում՝ խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող կամ խնամակալության ու հոգաբարձության յենթա-

կա անձանց: Դիմողների, գանգատավորների և այլ անձանց չնհրկայանալը գործի քննության արգելք հանդիսանալ չի կարող, յեթե նրանց հրավիրող մարմինը նրանց նհրկայությունը պարտադիր չի համարում:

96. Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու կամ վերացնելու, խնամակալներ կամ հոգաբարձուներ նշանակելու և նրանց արձակելու, գույքն ոտաբելու կամ զրավ գնելու, իրավունքներից հրաժարվելու, բողոքներ, հաշվետվություններ և յերեխայի դաստիարակության հետ կապված գանգատն հարցեր քննելու մասին, խնամակալության և հոգաբարձության մարմինները վորոշում են կայացնում, վորոնք հայտարարվում են շահագրգռված անձանց:

97. Յեթե այն անձը, վորի վերաբերմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն է նշանակված, գույք ունի խնամակալության և հոգաբարձության վորեւ այլ մարմնի գործունեյության շրջանում, ապա վերջինին կարող է հանձնարարվել այդ գույքի կառավարումը, նրա վաճառքը և այն բոլոր գործողությունների կատարումը, վորոնք վերաբերում են խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց գույքային իրավունքներին և շահերին:

98. Անչափահասների վերաբերմամբ խնամակալություն սահմանելու անհրաժեշտության (այս Որենսդրքի 69-րդ հոդված) և խնամակալ նշանակելու մասին, պարտավոր են յերեք ուղիւ ընթացքում տեղեկացնել՝ ա) տնային վարչությունները, տնատերերը և վարձակալները, յեթե այդ տներում կան խնամակալության յենթակա անչափահասներ, բ) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինները, յե-



թե մահվան փաստը զբանցելու պահին նրանց հայտնի դառնա անխնամ մնացած անչափահաս վորբեդի, այլև զբանցված ընկեցիկների և վորբերի մասին, գ) դատական կատարածուները, յերբ գույքը ցուցակագրելու ժամանակ նրանք խնամակալության յենթակա անչափահասներ հայտնաբերեն, դ) դատական մարմինները և միլիցիան այն դեպքում, յերբ ազատազրկման են դատապարտում կամ կալանքի տակ են վերցնում իրենց խնամքի տակ անչափահասներ ունեցող անձանց և յերբ այդ անչափահասները զբա հետևանքով մնում են առանց պատշաճ հսկողության, ե) խնամակալության կամ հոգաբարձության յենթակա անձանց հետ ազգակցությամբ կամ միատեղ տնտեսությամբ կապված քաղաքացիները:

Մանրագրվում.— խնամակալության և հոգաբարձության մարմինն անչափահասի վերաբերմամբ խնամակալություն է նշանակում նաև սեփական նախաձեռնությամբ, յեթե տեղեկանում է այդ անեղև անհրաժեշտության մասին:

99. խնամակալները գույքի վաճառքը կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի վորոշմամբ՝ հրապարակային աճուրդով կամ անհրաժեշտության դեպքում՝ փորձագետների կողմից վորոշված ազատ գնով: Աճուրդն յենթակա յե խնամակալության և հոգաբարձության մարմնի հետագա հաստատմանը:

100. խնամարկյալին պատկանող զբաժանական գումարները, արժեթղթերը և այլ արժեքները, բացառությամբ այն գումարների, վորոնք անհրաժեշտ են նրա ապրուստը հոգալու և նրա գույքը կառավարելու հա-

մար, պահվում են պետական հիմնարկներում (աշխատավորական խնայողական զբաժարկիչներում, Պետական բանկի բաժանմունքներում և այլն) ու չեն կարող պահվել խնամակալի մոտ:

101. խնամակալները և հոգաբարձուները յուրաքանչյուր տարի, վոչ ուշ քան մինչև փետրվարի 1-ը, խնամակալության և հոգաբարձության համապատասխան մարմնին գրավոր հաշվետվություն են ներկայացնում նախընթաց տարվա մասին: խնամակալի կամ հոգաբարձուի հաշվետվությունը պիտի պարունակի տեղեկություններ վոչ միայն այն մասին, թե գույքն ինչպես է կառավարվել կամ ինչպիսի յեկամուտներ են ստացել իրենց խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձինք, կամ թե ինչպիսի ծախսեր են կատարված, այլև այն մասին, թե ինչպես է իրագործվել անհրաժեշտ հոգատարությունը խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի վերաբերյալ, ինչպես է ընթացել անչափահաս խնամարկյալի դաստիարակությունը, կրթությունը, նրա նախապատրաստումը հանրագումար համար և այլն:

խնամակալությունը կամ հոգաբարձությունը դադարելուց հետո, խնամակալը կամ հոգաբարձուն ընդհանուր հաշվետվություն են ներկայացնում գույքը կառավարելու մասին:

102. Հաշվետվությունները քննվում են ըստ ելության, և այն դեպքում, յերբ ճիշտ են համարվում՝ հաստատվում են, հակառակ դեպքում, խնամակալից կամ հոգաբարձուից պահանջվում է ներկայացնել բացատրություններ և արդարացուցիչ փաստաթղթեր:



103. Խնամակալությունը դադարում ե՞ ա) ան-  
չափահասների նկատմամբ, յերբ նրանք դառնում են  
չափահաս, բացառությամբ այն դեպքերի, յերբ սահ-  
մանված կարգով բժշկական քննության յենթարկելուց  
հետո անհրաժեշտ ե համարվում շարունակել խնամա-  
կալությունը՝ նրանց հոգեկան հիվանդության կամ  
տկարամտության պատճառով, բ) հոգեկան հիվանդնե-  
րի նկատմամբ, յերբ սահմանված կարգով քննելուց  
հետո, նրանք առողջացած են համարվում, գ) շտալյոդ-  
ների նկատմամբ, յերբ որինական ուժ ե ստանում  
դատարանի վորոշումը նրանց գործունակ ճանաչելու  
վերաբերյալ, դ) գույքի նկատմամբ, յերբ անհայտ  
բացակայողը ներկայանում ե կամ յերբ ժառանգու-  
թյունն ընդունվում ե, ե) խնամարկյալի մահվան դեպ-  
քում:

#### Գ Լ ՈՒ Խ 4.

### ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՆԵՐԻՆ ՅԵՎ ՏԿԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

104. Հոգեկան հիվանդության կամ տկարամտու-  
թյան հետեանքով խնամակալություն նշանակելու հա-  
մար բժշկական քննություն կատարվում ե հատուկ  
հանձնաժողովի կողմից՝ համապատասխան շրջանային  
գործկոմի առաջնի վարչի կամ նրան փոխարինող  
անձի նախագահությամբ ե առնվազն յերկու բժշկի  
անդամակցությամբ, վորոնցից մեկն անպայման հոգե-  
բուժ պիտի լինի:

105. Հանձնաժողովի նիստի վայրի ե ժամանակի  
մասին հայտնվում ե այն անձանց ե հիմնարկներին,

վորոնք միջնորդել են բժշկական քննության յեն-  
թարկելու մասին:

106. Այս Որենսգրքի 104-րդ հոդվածով նախա-  
տեսված հանձնաժողովին իրավունք ե վերադասվում  
քննությանը յենթակա անձին տեղավորել մասնագի-  
տական բուժական հիմնարկում վոչ ավելի, քան յեր-  
կու ամիս ժամանակով կամ նրան հսկողության յեն-  
թարկել տանը: Հարկ յեղած դեպքում հանձնաժողովը  
հարցաքննում ե հիվանդին բուժող բժշկին ե այն բու-  
լոր անձանց, վորոնց հիվանդը վկայակոչում ե:

107. Քննության արդյունքների մասին կազմվում  
ե մանրամասն արձանագրություն, վորն ստորագրում  
են քննությանը մասնակցող բոլոր անձինք: Արձանա-  
գրության մեջ պետք ե հիշատակված լինի, թե տվյալ  
անձը հոգեկան հիվանդ ե, թե տկարամիտ ե, թե ար-  
դյոք կարիք ունի խնամակալության:

108. Հոգեկան հիվանդին առողջացած ճանաչելու  
կամ խնամակալությունը վերացնելու վերաբերյալ  
միջնորդությունը, բացի այս Որենսգրքի 98-րդ հոդ-  
վածում հիշատակված անձերից ե հիմնարկներից, կա-  
րող ե հարուցել նուե այն բուժական հիմնարկը, վոր-  
տեղ տեղավորված ե յեղել հիվանդը բժշկելու համար  
կամ հիվանդն ինքը:

109. Հոգեկան հիվանդին բժշկական քննության  
յենթարկելը, նրա առողջացած կամ խնամակալությու-  
նից ազատվելու յենթակա ճանաչելը կատարվում ե  
այս Որենսգրքի 104-107 հոդվածների կարգով:

110. Քննության հետ կապված ծախսերը կա-  
տարվում են քննությանն յենթարկված անձի գույքի



հաշվին, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ պետու-  
թյան հաշվին:

Ծանոթություն.— Առողջ ճանաչված անձի  
բժշկական քննություն հետ կապված ծախսերը  
կատարվում են քննության յենթարկելու մա-  
սին միջնորդություն հարուցած անձանց հաշվին:

111. Բժշկական հանձնաժողովի վորոշումը ամյալ  
անձին հոգեկան հիվանդ կամ տկարամիտ ճանաչելու  
մասին կարող է գանգատարկվել մեկ ամսվա ընթաց-  
քում բոլոր շահագրգռված անձանց և հիմնարկների  
կողմից:

112. Նախորդ հոգվածի համաձայն բժշկական  
հանձնաժողովի վորոշումների դեմ տրված գանգատնե-  
րը քննելու համար, Առողջապահության Ժողովրդա-  
կան կոմիտարիատին կից կազմակերպվում է հատուկ  
հանձնաժողով հետևյալ կազմով.— Առօրյա անձի  
ժախան բաժնի վարիչ, յերկու հոգերու ժնե՝ նշանակ-  
ված Առօրյա անձի կողմից, Ներքին Գործերի Ժողովը-  
ղական կոմիտարիատի և Արդարագատության Ժողո-  
վրդական կոմիտարիատի ներկայացուցիչները:

113. Բողոքներ քննելիս Առօրյա անձի  
հանձնաժողովը կատարում է ներկայացրած ապացույց-  
ների ստուգում կամ հարկ յեղած դեպքում ինքնու-  
րույն կերպով անհրաժեշտ նյութեր և հավաքում և  
հիվանդին վերաքննության յենթարկում:

Ծանոթություն.— Յեթե հանձնաժողովն այդ  
վերաքննությունն ավելորդ է համարում, ապա  
այդ մասին նա պատճառաբանված վորոշում և  
կայացնում:

Բ Ա Ժ Ի Ն 4.

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Գ Լ Ո Ւ Խ 1.

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ

114. Ծնողյան, մահվան, ամուսնության, ապա-  
հարզանի և վորդեգրման գրանցումները քաղաքներում  
և շրջանային կենտրոններում կատարում են քաղա-  
քացիական տկտերի կացության գրանցումներ (Զագս)  
քաղաքային և ռայոնական բաժանմունքները (բյուրո),  
իսկ գյուղական վայրերում և բանվորական ավաննե-  
րում— գյուղական և ավանային խորհուրդները (1936  
թվի հոկտեմբերի 22-ին:— Որենքների և Կարգ. Ժող.  
№ 10, հոդ. 80):

115. Նախորդ հոգվածում նշված գրանցումները  
կատարվում են, ինչպես նաև գրանցումների մասին  
սկզբնական վկայականներ տրվում են ձրիաբար և ա-  
ղատված են բոլոր տեսակի տուրքերից, բացի ապա-  
հարզանից, վորի համար գանձվում է առաջին ամուս-  
նալուծության համար— 50 ռուբլի, յերկրորդ ամուս-  
նալուծության համար 150 ռուբլի, յերրորդ և հաջորդ  
ամուսնալուծությունների համար 300 ռ. (1938 թ.  
հոկտ. 22-ին:— Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 78):

116. Քաղաքացիության կացության տկտերի  
գրանցման մատյանը պահվում է յերկու որինակից:

117. Յուրաքանչյուր գրանցում, վորը կատար-  
վում և համապատասխան մատյանում, պիտի կարդաց-  
վի դիմում տվողներին, ստորագրվի նրանց կողմից՝  
յեթե նրանք գրագետ են, իսկ անգրագիտության դեպ-



քում՝ յերկու գրազեա վկաների կողմից և յերկու զեպ-  
քում ել հավասարապես՝ արձանագրությունը կազմող  
պաշտօնիայի կողմից:

118. Քաղաքացիական կացության ակտերի մատ-  
յաններում կատարված գրանցումների մեջ ուղղումներ  
մտցնելու անհրաժեշտության դեպքում, յեթե վեճ և  
առարկություն չկա, հիշյալ ուղղումները կատարվում  
են քաղաքացիական կացության ակտերի գրանցման  
կենտրոնական մարմնի թույլտվությամբ:

119. Մատյաններում կատարված գրանցումները  
կարող են վեճի առարկա դարձվել շահագրգռված ան-  
ձանց կողմից՝ դատական կարգով:

120. Քաղաքացիական կացության ակտերի  
գրանցման մատյաններ վարելու կարգը սահմանվում է  
Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի և Ար-  
դարագատության Ժողովրդական Կոմիսարիատի հրա-  
հանգով:

121. Ծննդյան վերաբերյալ դիմումները պիտի  
տրվեն մեկ ամսից վոչ ուշ, հաշված ծննդյան օրից:  
(1936 թ. հոկտ. 22-ին:—Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ.  
80):

122. Յերեխայի ծնունդը պետք է գրանցվի ծնող-  
ների կամ նրանցից վորեւ մեկի դիմումի հիման վրա,  
իսկ ծնողների հիվանդության, մահվան դեպքում կամ  
վորեւ պատճառով դիմում տալու հնարավորությունից  
զուրկ լինելու դեպքում—ազգականների կամ այլ ան-  
ձանց դիմումով, վորոնց խնամքի տակ է գտնվում  
յերեխան: (1936 թ. հոկտեմբերի 22-ին:—Որ. և Կարգ.  
Ժող. № 10, հոդ. 80):

123. Ծննդյան գրանցման մեջ մատնանշված պի-

տի լինի ծննդյան ժամանակն ու վայրը, զավակի սե-  
ռը, նրան տրվող անունն ու ազգանունը, ինչպես նաև  
ծնողների անունը, հայրանունը, ազգանունը, մշտական  
բնակավայրը, զբաղմունքը և հասակը:

124. Յեթե հայտարարություն տվողը մայրն է,  
ապա նա պարտավոր է ցույց տալ նաև հոր անունն  
ու ազգանունը կամ հայտարարել, վոր կամ չի կարող,  
կամ չի կամենում պահանջվող տեղեկությունները տալ:

125. Ծննդյան մասին դիմում պիտի տրվի նաև  
յերեխան մեռած ծնվելու դեպքում, վորի գրանցումը  
կատարվում է 24 ժամից վոչ ուշ հաշված ծննդյան  
պահից: (1936 թ. հոկտ. 22-ին:—Որ. և Կարգ. Ժող.  
№ 10, հոդ. 80):

126. Գրանցելն անհրաժեշտ է նաև յերեխա գրու-  
նելու ժամանակ: Այս դեպքում դիմումը պիտի կցվի  
միլիցիայի կողմից կազմված արձանագրությանը, իսկ  
միլիցիա չլինելու դեպքում՝ գյուղխորհուրդի արձա-  
նագրությանը, հիշատակելով յերեխայի գտնելու ժա-  
մանակը, վայրը և հանգամանքները: Գրանցումը կա-  
տարվում է յերեխա գտնելուց յերեք օրից վոչ ուշ  
(1936 թ. դեկտեմբերի 22-ին:—Որ. և Կարգ. Ժող. № 10,  
հոդ. 80):

#### Բ. ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

127. Մահվան դեպքերի գրանցման մատյանն են  
մուծվում ինչպես մահվան, այնպես և վորեւ մեկին  
դատարանի կողմից մահացած ճանաչելու վերաբերյալ  
դեպքերը:

128. Տեղի ունեցած մահվան մասին դիմում պի-  
տի տրվի դեպքից վոչ ուշ, քան յերեք օրվա ընթաց-



հացած հայտարարված անձի վերջին հայտնի բնակավայրի, ցույց տալով թե՛ դատարանի անունը և թե՛ վորոշում կայացնելու ժամանակը:

133 ա. Պաշտոնատար անձինք, վորոնք անհիմն կերպով կմերժեն ծնունդների և մահվան դեպքերի գրանցումը, ժամանակին չեն կատարի գրանցումը, ինչպես նաև բնակչության բնական շարժման հաշվառման մասին ժամանակին չեն ներկայացնի տեղեկություններ և կամ կներկայացնեն սխալ տեղեկություններ, յենթարկվում են պատասխանատվության ՀԽՍՀ Բր. Որ. 137 հոդվածով (1936 թ. հոկտ. 22-ին:—Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 80):

#### Գ. ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՊԱՀԱՐՉԱՆԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

134. Ամուսնությունը գրանցել ցանկացողներն այդ մասին դիմում են տալիս քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմին՝ ըստ դիմողներից վորևե մեկի բնակություն վայրի:

135. Ամուսնություն գրանցողները դիմում տալու ժամանակ պարտավոր են ներկայացնել իրենց ինքնությունը հաստատող վկայականներ, ստորագրություն՝ այս Որենսգրքի 1-ին բաժնի 2-րդ գլխում մատնանշված արգելքները չլինելու մասին և այն մասին, վոր նրանք փոխադարձաբար իրադեկ են իրենց առողջության վիճակի մասին, մասնավորապես վեներական, հոգեկան և պալարախտային հիվանդությունների վերաբերմամբ, ինչպես նաև մատնանշել, թե՛ նրանցից յուրաքանչյուրը քանի յերորդ անգամ և ամուսնանում, հաշված և՛ գրանցված և՛ չգրանցված ամուսնու-

թյունները և քանի՞ գավակ ունի (1936 թ. հունիսի 25-ին:—Որ. և Կարգ. Ժող. № 11, հոդ. 88):

136. Ամուսնությունը գրանցող պատասխանատու պաշտոնատար անձը պարտավոր և կարգավ ամուսնացողներին այս Որենսգրքի 4, 5 և 6 հոդվածները և նախադգուշացնել սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին: Այս բոլորից հետո կատարված գրանցումը կարգացվում և, ստորագրվում և վավերացվում և պաշտոնիայի կողմից:

137. Ամուսնության գրանցումն՝ ամուսնացողների ցանկությամբ՝ կարող և կատարվել նաև վեկաների ներկայությամբ:

138. Յեթե մինչ ամուսնության գրանցումն ստորագրելը վորևե մեկից գրանցման դեմ ուրինական արգելքներ լինելու մասին դիմում ստացվի, պաշտոնիան պարտավոր և կասեցնել գրանցումը և պահանջել, վոր հայտարարություն անողը համապատասխան փաստական ապացույցներ ներկայացնի այն ժամկետում, վոր նրան կտա քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի վարիչը:

139. Ոտարերկրացիների և խորհրդային քաղաքացիների միջև կայացած ամուսնությունները, այլև իՍՏ Միության տերիտորիայում ոտարերկրացիների միջև կայացած ամուսնությունները գրանցվում են ընդհանուր հիմունքներով:

Ծանոթություն.— Փոխադարձության հիմունքներով թույլատրվում և գրանցել ոտարերկրացիների ամուսնությունները համապատասխան պետությունների իՍՏ Միության տերիտորիա-



յում գործող զեւսականատներում և ներկայացուցչու-  
թյուններում, պահպանելով այս Որենսգրքի  
1-ին բաժնի 2-րդ գլխում նախատեսված պայ-  
մանները:

140. ԽՍՀ Միության սահմաններից դուրս ոտար-  
յերկրացիների միջև համապատասխան պետութ-  
յունի որենքներով կատարված ամուսնութ-  
յունները ՀԽՍՀ տերիտորիայում պատշաճ կարգով ձևակերպ-  
ված են համարվում այս Որենսգրքի 1-ին բաժնի 1-ին  
գլխի իմաստով:

141. Ամուսնութ-  
յունը գրավոր կամ բանավոր ձևով ներկայացվում և  
քաղաքացիական կացութ-  
յան ակտերի գրանցման  
մարմին՝ ըստ ամուսիններից  
վորեն մեկի բնակո-  
թյան վայրի:

142. Յեթե դիմում ներկայացնողը փաստաթուղթ  
չունի, վորով կարող և հաստատել լուծվող ամուսնո-  
թյան գրանցված լինելը, ապա նա ստորագրութ-  
յուն և տալիս այդ մասին, ցույց տալով ամուսնութ-  
յան գրանցման ժամանակն ու վայրը և իր վրա յե վերցնում  
իր տված տեղեկութ-  
յունների ճշտութ-  
յան պատասխա-  
նատութ-  
յունը:

143. Ամուսնալուծութ-  
յուն կատարելիս բաժանվող  
յերկու ամուսիններն ել անձամբ կանչվում են Չագս և  
յեթե տվյալ վայրում մտցված և անձնագրային սիս-  
տեմ, բաժանվողների անձնագրերում նշվում և ամուս-  
նալուծութ-  
յան փաստը (1936 թ. հոկտեմբերի 22-ին:  
— Որ. և Կարգ. Ժող. № 10, հոդ. 78):

144. Ամուսնալուծութ-  
յունը ճշտող այն փաստա-  
թղթերը, վորոնք համապատասխան պետութ-  
յունների

որենքներով նախատեսված կարգով տրված են ոտար-  
յերկրացիներին, հավասարեցվում են ամուսնութ-  
յունի գրանցման մատյանների քաղվածքներին:

#### Գ. ԱՅԼ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

145. Համապատասխան մարմինների վորոշումե-  
րը՝ վորդերման, ազգանունը փոխելու, հայրութ-  
յունը կամ մայրութ-  
յունը ճանաչելու և կամ ծնագյան գրան-  
ցումն ուղղելու և լրացնելու մասին յերկու շաբաթվա  
ընթացքում պիտի ներկայացվեն քաղաքացիական կա-  
ցութ-  
յան ակտերի գրանցման մարմիններին՝ համապա-  
տասխան մատյաններում նշելու համար:

#### ԳԼՈՒԽ 3.

ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ ԿՈՐՍՏՅԱՆ ՅԵՎ ԿԱՄ  
ՎՈՐՅԵՎԵ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅԴ ՄԱՏՅԱՆԻՑ ԲԱՂՎԱԾԲ  
ՍՏԱՆԱԼՆ ԱՆՀՆԱՐ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՂԱԲԱ-  
ՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

146. Այն զեպքում, յերբ քաղաքացիական կա-  
ցութ-  
յան ակտերի գրանցման մատյանները կամ նախ-  
կին հափառերական մատյանները կորել և վոնչացել  
են և կամ վորեն պատճառով, շահագրգռված անձերից  
անկախ, վերջիններին հնարավոր չե քաղվածք կամ  
տեղեկանք տալ ամուսնութ-  
յան, ապահարդանի, մահ-  
վան և կամ գրանցման յենթակա զեպքի մասին—հա-  
մապատասխան զեպքը՝ շահագրգռված անձանց դիմու-  
մի համաձայն՝ հաստատում և այդ անձանց բնակա-  
վայրում գտնվող ժողովրդական դատարանը:

Դատարանի վորոշումը, վորով հաստատվում և



Ա.

Ազգանուն.— Ամուսինները—7, 21, զավակները—34, մոր զինումը հղիության ժամանակ, ցույց տալով զավակի հոր Ա.—28, վորդեգրվածի—60, գրանցում Ա. փոխելու մասին—114, 145.

Ալիմենս.—տես Ապրուստ.

Ակսեր.—Քաղաքացիական կացության—տես Ամուսնություն, Մահ, Դադարումն ամուսնության Ծնունդ, Վորդեգրում:

Ամուսնություն.—Ա. ազգանունը—7, քաղաքացիությունը—8, արհեստ ընտրելու ազատությունը—9, գույքային իրավունքները—10, 11, փաստական կնոջ ժառանգական իրավունքները—11, ամուսնական կենակցության ապացույցները—12, պայմանազրական հարաբերությունները Ա. միջև—13, ապրուստ ստանալու իրավունքը—14, 15, 16, 24.

Ամուսնություն հառախ.—4, 5.

Ամուսնություն.—Գրանցումը—1—7, 114, 134, 135, 136, 137, 138, 139, 140, Ա. գրանցման վճարը—115, ամուսնալուծության գրանցման վճարը—115, փաստական Ա.—3, 11, 12, քաղաքացիությունը—8,

<sup>1</sup> Ցույց են տրված Ամուսնության, Ընտանիքի և Խնամակալության Որենսդրության հոդվածները:

ինչպես մատյանների կորստյան, վոչնչացման փաստը, կամ նրանցից վորեն քաղվածք տալն անհնար լինելը, այնպես եւ այն դեպքը, վորը յենթակա յե կրկնակի գրանցման, հիմք և ծառայում համապատասխան գեպքը նորից գրանցելու քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյաններում այն հիշատակությամբ, թե տվյալ գրանցումը կրկնակի յե և կատարվում և նույն գրանցման հիման վրա՝ համապատասխան քաղվածք տալու նպատակով:

147. Այն դեպքում, յերբ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյանները կամ նախկին չափաբերական մատյաններն իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմների, տարերային աղետների ժամանակ կորել և վոչնչացվել են և կամ վորեն պատճառով, շահագրգռված անձերից անկախ, վերջիններիս հնարավոր չե քաղվածք կամ տեղեկանք տալ ծննդյան մասին, այդ անձանց հասակը վորոշում և քաղաքային և շրջանային քաղաքացիական ախտերի մարմիններին կից պարբերաբար գործող միջվարչական հանձնաժողովը:

148. 147-րդ հոդվածում նշված հանձնաժողովն ունի հետևյալ կազմը՝ շրջանային գործադիր կոմիտեյի կամ քաղխորհրդի պատասխանատու ներկայացուցիչը, ԱՖԽՍՀ ՆԳԺԿ քաղաքացիական ախտերի բաժանմունքների ներկայացուցիչները տեղեկում և քաղ. շրջ. առբաժնի ներկայացուցիչներ—բժիշկները (1936 թվի դեկտեմբերի 25-ին:—Որ. և Կարգ. Ժող. № 12, հոդ. 113):



ամուսինների արհեստ և բնակավայր ընտրելու  
իրավունքը—9, գույքը—10, 11, 13, ամուսնա-  
կան կենակցության ապացույցները—12, ապ-  
րուստ ստանալու իրավունքը—14, 15, 16, 24,  
Ա. դադարումը—17—24, 141, 144:

Անգարծունակներ.— Խնամակալություն Ա. վրա—68.

Աննայս բացակայություն.— Ամուսնության դադարումը  
—17, խնամակալություն գույքի վրա—69, գրան-  
ցում մահացած ճանաչելու մասին—133.

Անձնագիր.— Ամուսնալուծության դեպքում Ա. ներկա-  
յացնել—143.

Անչափահասներ.— Վորդեգրումը—57, խնամակալու-  
թյունն ու հոգաբարձությունը—69, 70, 72, 89,  
98, Ա. չեն կարող խնամակալներ և հոգաբար-  
ձուներ լինել—77.

Առակերտություն.—45, 89.

Աբխազական.— Ա. ալիմենտ պահելը—48.

Աբխազներ.— Ալիմենտ հաշվելը—48-ա.

Ապահագրում.— տես Դադարումն ամուսնության.

Ապրուս.— Մեկ ամուսնու կողմից մյուսին Ա. տալու  
պարտականությունը—14, 15, 16, 22, 23, 24,  
զավակներին Ա. տալու պարտականությունը—  
42, 46, 48, 48-ա., 50, ծնողներին Ա. տալու  
պարտականությունը—49, 50, ծնողական իրա-  
վունքներից զրկվելու դեպքում զավակներին Ա.  
տալու պարտականությունը—51, ապրուստի չա-  
փը—48, 48-ա., յերկու ծնողների մասնակցու-  
թյունը զավակներին Ա. տալու վերաբերմամբ—  
52, յեղբայրների և քույրերի ապրուստ ստանա-

լու իրավունքը—54, պապի և տատի—55, վոր-  
դեգրվածներին Ա. տալը—67.

Առքավիճակներ.— Պունկցիաները խնամակալության գծով  
—72.

Արժեքներ.— Խնամարկյալների—100.

Արտասնման.— Խնամակալություն և հոգաբարձություն  
Ա. գտնվող ՀԽՍՀ քաղաքացիների գույքի վրա  
—85:

Բ.

Բազմակնություն.—6.

Բարեկամներ.— Ամուսնությունների գրանցումն արգե-  
լելը—6, յեղբայրների և քույրերի ապրուստ  
ստանալու իրավունք—54, պապի և տատի ապ-  
րուստ ստանալու իրավունք—55:

Բնակավայր.— Ամուսիններին—3, զավակներին—40, խնա-  
մարկյալների—75:

Գ.

Գանգատներ.— Խնամակալության և հոգաբարձության  
հարցերով—93, 94, հոգեկան հիվանդ և տկարա-  
միտ ճանաչելու վերաբերյալ վորոշումների դեմ  
—111.

Գյուղատկան ծուխ.— Ամուսինների իրավունքները Գ. ծ.  
վերաբերմամբ—10, 11, ծնողների և զավակների  
իրավունքները—Գ. ծ. գույքի վերաբերմամբ—  
53, Գ. ծ. անգամից յերեխայի համար ապրուստ  
գանձելը—56.

Գյուղատնտեսներ.— տես Խորհուրդներ և Գործադիր  
կոմիտեներ:



Գտնելը յերեխայի.— Գրանցում յերեխա գտնելու մասին  
—126.

Գրանցում բաղ. կացութիւնն աղտոտելու.— Ամուսնութեան  
Գ. 1, 6, ուղղումներ մտցնելու վերաբերյալ—118,  
145, վորդեգրման—59, գազար մարմինների հա-  
ղորդման՝ խնամակալութիւնն նշանակելու մասին  
—98, ընդհանուր սկզբունքներ—114, 120, պաշ-  
տոնատար անձանց պատասխանատվութիւնն ան-  
հիմն կերպով, Գ. մերժելու համար—132, 132ա,  
ծնունդների Գ.—121-126, մահւման Գ.—127-132,  
Գ. մահացած ճանաչելու մասին—133, ամուս-  
նութեան Գ.—134, 138, ամուսնութեանն ոտար-  
կերկրացիների և ոտարերկրացիների հետ—139,  
140, ամուսնութեան զաղարումը—141, 142, 143,  
144, ամուսնալուծութեան մասին անձնագրում  
նշելը—143, Գ. լրացումներ—145, ազգանուն վո-  
խելը—145, վորդեգրումը—145.

Գրով.— Խնամարկյալի գույքի—86.

Գույք.— Ամուսինների Գ.—10, 11, 13, զավակների—  
43, գյուղացիական ծխի—53, խնամակալութիւն  
Գ. վրա—68, 69, խնամակալութիւնն արտասահ-  
մանում մահացած ՀԽՍՀ քաղաքացիների գույքի  
վրա—85, խնամարկյալի Գ.—75, 82, 86, 87, 97,  
99, 100, տե՛ս Գործարքներ:

Գործադիր կոմիտեներ.— Պարտականութիւնները խնա-  
մակալութեան և հոգաբարձութեան գծով—72, 73:

Գործաբաններ.— Խնամակալի—86, խնամարկյալի հետ Գ.  
կնքելն արգելելը—88, հոգաբարձութեան տակ  
գտնվողների հետ—90.

Գ.

Դադարումն ամուսնալուծում.— 17, 24, 141, 144, վճար  
ամուսնալուծութիւնն գրանցելու համար—115.

Դատական կատարում.— Խնամակալութիւնն և հոգա-  
բարձութիւնն նշանակելու անհրաժեշտութեան  
մասին հայտնելու պարտականութիւնը—98.

Դատարան.— Դատական հրաման տալն ամուսնալուծու-  
թեան համաձայնութիւնը չկատարելու դեպքում  
—23, Գ. վճիռը զավակներին տրվելիք ապրուս-  
տի չափի մասին ծնողների միջև համաձայնու-  
թեան չլինելու դեպքում—24, հայրութիւնն վո-  
րոշելու համար Գ. զիմելը—30, զավակների բնա-  
կավայրը վորոշելը—40, ծնողների ներկայացուց-  
չութիւնը Գ.—43, պահանջ զավակներին վերա-  
դարձնելու մասին—44, ծնողական իրավունքնե-  
րից զրկելը—46, 47, զավակների և ծնողների  
հայցերն ապրուստի մասին—50, վորդեգրման բե-  
կանումը—66, 67, խնամակալութիւնն և հոգա-  
բարձութիւնն նշանակելու անհրաժեշտութեան  
մասին հայտնելու պարտականութիւնը—99.

Դատախազարկյալն զավակներին.— 41, 45, խնամարկյալ  
ներին—83.

Դիակ.— Հայտարարելը—128, 129:

Յե.

Յեղբայրներ.— Քույրերի և յեղբայրների միջև ամուս-  
նութիւններ գրանցելն արգելելը—6, ապրուստ  
ստանալու իրավունքը—54.

Յեղկնութիւն.— 6.



Զավակներ.— Զ. ազգանունը—34, Զ. հարցն ամուսնա-  
լուծութեան գեպքում—22, 23, Զ. ապրուստի հար-  
ցի լուծումը—24, Զ. և ծնողների փոխհարարե-  
րութեանները—25, 38, 39, Զ. ծննդեան գրան-  
ցումը—26, գրանցման բացակայութեանը ծնող-  
ների մասին—27, հայրութեանը—28, 32, ծնո-  
ղական իրավունքները—33, 38, 39, քաղաքա-  
ցիութեանը—35, 36, կրոնը—37, բնակավայրը—  
40, ծնողների իրավունքներն ու պարտականու-  
թեանները—41, 42, 43, 44, 45, 48, ծնողական  
իրավունքներից զրկելը—46, 47, 51, Զ. պարտա-  
կանութեանները—49, 50, ծնողների կողմից Զ.  
ապրուստ տալու պարտականութեանը 48, 48-տ.,  
50, պատասխանատվութեանն ապրուստ տալու  
համար—52, Զ. իրավունքները գյուղացիական  
ծխի գույքի վերաբերմամբ—53, վորդեգրումը—  
57, 67, զիմում ծննդեան մասին—121, 122, գրան-  
ցում ծննդեան մասին—123, 124, զիմում մեռած  
յերեխա ծնվելու մասին—125, գրանցում յերե-  
խա գտնվելու մասին—126, լրացումներ ծննդեան  
գրանցման—145.

Զրկում ծնողական իրավունքներից.— տես Ծնողական  
իրավունքներ.

թ.

Թուներ.— տես Պապ.

ժ.

ժամկետ.— Կարիքավոր անաշխատունակ ամուսնուն ոգ-  
նութեան հասցնելու համար—15, հայրութեան

գործերով—28, 29, 31, խնամակալութեան և հո-  
գարարձութեան նշանակելու անհրաժեշտութեան  
մասին հայտնելու համար—98, խնամակալութեան  
և հոգարարձութեան հաշվետվութեաններ ներ-  
կայացնելու համար—101, ծնունդներ գրանցելու  
համար—121, մահվան գրանցման և զիակի հայտ-  
նաբերման մասին հայտնելու համար—128, ֆու-  
ցած գրանցումների համար—145.

ժառանգութեան.— Խնամակալը չի կարող հրաժարվել  
խնամարկյալին հասանելիք ժառանգութեանն ըն-  
դունելուց—86:

կ.

կուսբաժին.— Իրավունքներն անչափահասների խնա-  
մակալութեան գծով—72:

ն.

նմադրամաքիզներ.— Խնամարկյալի միջոցները պահելը  
—100.

նմամակալ.— Ն. պաշտոն վարելու իրավունքի սահմա-  
նափակումները—77, Ն. նշանակվելուց հրաժար-  
վելը—78, Ն. իրավունքներն ու պարտականու-  
թեանները—79, 80-83, 86-91, 101, 102, հսկո-  
ղութեան Ն. գործունեություն վրա—80, հեռա-  
ցումը—92, դանդաղներ Ն. ղեմ—93.

նմամակալութեան.— Զավակների ազգանուն վորոշելը—  
34, զավակների վերաբերմամբ ձեռք առնվող ձեռ-  
նարկումների առթիվ վիճելի հարցեր լուծելը—  
39, ծնողական իրավունքներից զրկելու գեպքում  
—46, խնամարկյալների տեսակցութեանը ծնողնե-



րի հետ թույլատրելի—47, խ. իրավունքները վոր-  
դեզրույթյան դեպքում—59, 61, 65, ընդհանուր  
սկզբունքներ—68-85, իրավունքներն ու պար-  
տականութունները—86-94, գանգառներ խնա-  
մակալության և հոգաբարձության մարմինների  
վորոշումների դեմ—94, խ. գործերի վարույթը—  
95, 102, դադարումը—103, խ. հոգեկան հիվանդ-  
ների և տկարամիտների վրա—104-110:

Խորհուրդներ և գործադիր կոմիտեներ.—Խնամակալու-  
թյան և հոգաբարձության մարմինները—72,  
խնամակալություն և հոգաբարձություն նշանա-  
կելու անհրաժեշտության մասին հայտնելը—98:

#### Ծ.

Ծնողական իրավունքներ.—33, 46, 47, 51, 77.

Ծնողներ.—Զավակների փոխադարձ իրավունքները—  
25, Ծ. գրանցումը ծնողների գրանցման մատյա-  
նում—26, 27, մոր դիմումը զավակի հոր մասին  
—28, 29. հայրությունը 30, 31, 32, Ծ. աղգա-  
նունը—34, Ծ. քաղաքացիությունը—35, 36, Ծ.  
համաձայնությունը զավակների կրոնի մասին—  
37, Ծ. ձեռնարկումները զավակների վերաբեր-  
մամբ—38, 39, Ծ. բնակավայրերի բաժան լինելը  
—40, Ծ. պարտականությունները—41, 42, 43,  
Ծ. իրավունքները գյուղացիական ծխի գույքի  
վերաբերմամբ—53, վորդեզրելու համաձայնու-  
թյունը—62, Ծ. որինական խնամակալներ և հո-  
գաբարձուներ են—71.

Ծնունդ.—Գրանցում Ծ. մասին—114-126, 145.

#### Կ.

Կանչելը.—Զագս բաժանվող ամուսինների—143.

Կոլսնեստուրքյուններ, կոլսնեստակուններ.—Կոլոնտեսա-  
կաններից ալիմնա վորոշելու և գանձելու կար-  
գը—48-ա.

Կորուս.—Քաղաքացիական կացության ակտերի գրանց-  
ման մատյանները կորչելու կամ վոչնչանալու  
դեպքում քաղվածքներ տալը—146, հասակ վո-  
րոշելու կարգը—147, 148:

#### Հ.

Հանձնաժողով հոգեկան հիվանդներին բնադ.—104, 111.

Հայր.—տես Ծնողներ:

Հայրություն.—27-32, 145.

Հաւելեսվորքյուն.—Խնամակալների և հոգաբարձուների  
—101, 102:

Հաստակական կազմակերպություններ.—Խնամակալներ  
և հոգաբարձուներ նշանակելը—74, 80.

Հսկողություն.—Խնամակալության և հոգաբարձության  
մարմինների գործունեություն վրա—73.

Հոգաբարձու.—տես Խնամակալ.

Հոգաբարձություն.—տես Խնամակալություն.

Հոգեկան հիվանդներ.—Ամուսնությունների գրանցում  
արգելելը—6, խնամակալությունը—69, 72, 79,  
84, 89, քննությունը—104-113:

#### Մ.

Մահ.—Ամուսնու—17, խնամակալություն մահացածի  
գույքի վրա—69, Մ. գրանցումը—114, 127, 128,



129, 130, մեռած յերեխա—125, գրանցում մահացած ճանաչելու մասին—133.

Մայր.—տես Ծնողներ.

Մայրություն.—Ապացուցելը—27, գրանցում Մ. ճանաչելու մասին—145.

Միլիցիա.—Խնամակալություն և հոգաբարձություն նշանակելու մասին Մ. հայտնելը—98.

Մուհակներ.—86:

## Ն.

Ներկայացուցչություն.— Զավակների գործերով—43, խնամարկյալների գործերով—86, ներկայացուցչություններ լիազոր ԽՍՀՄ պարտականություններ խնամակալության և հոգաբարձության գծով—85.

Նվիրատվություն.—Խնամարկյալին պատկանյալ գույքի—86.

## Պ.

Պայմանագիր.— Ամուսինների միջև—13, խնամարկյալների—91, խնամակալների և հոգաբարձուների—86.

Պապ.— Պապի և տատի իրավունքը թոռնից ապրուստ ստանալու—55.

## Ս.

Սցիալական ապահովության բաժիններ.— Ֆունկցիոնալներ խնամակալության գծով—72.

## Վ.

Վարձում.— Յերեխաներին աշխատանքի վարձելու կարգը—45.

Վարչական տույժ.— Ծնողյան և մահվան մասին դիմում տալուց խուսափելու կամ ժամկետը խախտելու համար—128, 131.

Վերադարձնելը զավակների.— Հարցեր զավակներին Վ. մասին—44.

Վկաներ.— Ամուսնություն—137.

Վարձագրում.— Ընդհանուր սկզբունքներ—57-67, գրանցումը 114, 115:

## Տ.

Տաս.—տես Պապ.

Տկառավիսներ.— Տես Հոգեկան հիվանդներ.

Տնային վարչություններ.— խնամակալություն և հոգաբարձություն նշանակելու անհրաժեշտության մասին հայտնելը—98.

Տուգանք.— Ծնողյան և մահվան դեպքը գրանցելուց խույս տալու կամ ժամկետը խախտելու համար—128, 131:

## Ռի.

Ուղղումներ.— Զագսի մատյաններում—118, 145:

## Փ.

Փաստական ամուսնություն.— 11, 12.

Փոքրահասակներ.— Վորդեգրումը—57, խնամակալությունը—68:

## Ք.

Քաղաքացիություն.— Ամուսնություն գրանցելիս—8, զավակների—35, 36.


Քույրեր.—տես Յեղբայրներ:



Ո.

Ոստերկրացիներ.—Ո. ամուսնությունները—139, 140,  
ոտարներկրյա որենքներով կատարված ամուսնու-  
թյան վերաբերյալ փաստաթղթերի նշանակու-  
թյունը—144.

Ոստրում գուլթի.—տես Գործարքներ:



Խմբագիր Ռ. Գ ու լ թ ա ն յ ա ն  
Տեխ. խմբագիր Զ. Մ ա ր ու խ յ ա ն  
Սրբագրել է Մ. Հ ա խ ն ա ղ ա ղ յ ա ն

Գրավիտի լիագիր S— 1621, պատվ. 679, տիրած 2000:

Պետականաբար ներկայացված լիագիր, Յերեան.





THE  
LIBRARY OF THE  
MUSEUM OF NATURAL HISTORY  
NEW YORK

THE  
LIBRARY OF THE  
MUSEUM OF NATURAL HISTORY  
NEW YORK



ՀՀ Ազգային գրադարան



NL0218247



ԳԻՆԸ 1 ՌՈՒԹԼԻ

128

37.302

~~37.302~~

977

1  
2